ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Համակարգային բլոկ (պրոցեսոր)։ Պրոցեսորը պետք է լինի x86-64 ճարտարապետությամբ, սեղանադիր համակարգիչների համար նախատեսված և ունենա առնվազն 6 ֆիզիկական միջուկ, 12 հոսք, առնվազն 18 ՄԲ L3 կամ Smart Cache քեշ հիշողություն և առնվազն 4.4 ԳՀց առավելագույն Turbo/Boost հաճախականություն։ Օպերատիվ հիշողություն՝ առնվազն 16 ԳԲ DDR5։ Կուտակիչ՝ առնվազն 500 ԳԲ ծավալով NVMe M.2 SSD։ Գրաֆիկական քարտ՝ սեղանադիր համակարգչի համար նախատեսված, առնվազն NVIDIA GeForce RTX 3050 կամ համարժեք արտադրողականությամբ, առնվազն 6 ԳԲ GDDR6 սեփական տեսահիշողությամբ և միաժամանակ առնվազն երկու 3840×2160@60Hz էկրան միացնելու հնարավորությամբ։ Պետք է ունենա դրա համար անհրաժեշտ առնվազն երկու ֆիզիկական տեսաելք՝ HDMI 2.0, DisplayPort 1.4 կամ ավելի բարձր ստանդարտի։ Մայրական սալիկ՝ պրոցեսորի, օպերատիվ հիշողության, SSD-ի և գրաֆիկական քարտի հետ լիարժեք համատեղելի, Gigabit Ethernet ցանցային միացմամբ և առնվազն 4 հատ USB 3.0 կամ ավելի բարձր ստանդարտի։ Սնուցման բլոկ՝ առնվազն 500 Վտ անվանական հզորությամբ, առնվազն 80 PLUS Bronze հավաստագրմամբ, Active PFC տեխնոլոգիայով և գերլարումից, գերհոսանքից, կարճ միացումից ու գերբեռնվածությունից պաշտպանություններով։ Համակարգչի իրանը պետք է ապահովի բաղադրիչների պատշաճ օդափոխությունը և հովացումը։ Հավաքածուում պետք է ներառվեն ստեղնաշար և օպտիկական մկնիկ։ Համակարգիչը կարող է հավաքված լինել մատակարարի կողմից։ Բոլոր հիմնական բաղադրիչները՝ պրոցեսորը, մայրական սալիկը, օպերատիվ հիշողությունը, SSD կուտակիչը, գրաֆիկական քարտը և սնուցման բլոկը, պետք է լինեն նոր,

	չօգտագործված, գործարանային արտադրության, ունենան արտադրողի և մոդելի հստակ նշում ու համապատասխանեն իրենց արտադրողների պաշտոնական տեխնիկական բնութագրերին: Չի թույլատրվում օգտագործել վերանորոգված, վերականգնված, նախկինում շահագործված, արտադրողի ու մոդելի նույնականացման նշում չունեցող բաղադրիչներ: Համակարգիչը պետք է մատակարարվի ամբողջությամբ հավաքված, կարգաբերված, փորձարկված և շահագործման պատրաստ վիճակում: Երաշխիքային ապահովում և սպասարկում Մատակարարը պետք է տրամադրի առնվազն 12 ամիս երաշխիք՝ ընդունման-հանձնման օրվանից: Երաշխիքային սպասարկման բոլոր ծախսերը կրում է մատակարարը, իսկ վերանորոգման անհնարինության դեպքում սարքը պետք է փոխարինվի նոր և սույն բնութագրի պահանջներին համապատասխան սարքով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	